ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 12 ***«09» դեկտեմբերի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 123

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3.44778 հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող կիսաչոր ծառերը հատելու և համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնելու համար թույլտվություն տալու մասին:
4. Գլաձոր համայնքին պատկանող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով անհատույց աշխատանքներ կատարելու և օգտագործվող դիզելային վառելանյութը նվիրաբերելու համար թույլտվություն տալու մասին:
5. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ 73 որոշման հավելվածում կատարված փոփոխություններն ի գիտություն ընդունելու մասին:
6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Գոռ Գնելի Գևորգյանին գույքահարկի գծով արտոնություն տալու մասին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.	բացակա		
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 12 ***«09» դեկտեմբերի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 124

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.44778 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 246 դրական եզրակացությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3.44778 հա այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0166-0090/ փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ կոմունալ օբյեկտների հողեր:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.	բացակա		
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 12 *«09» դեկտեմբերի 2021թ.*

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 125-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱՉՈՐ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջով և հիմք ընդունելով Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն՝ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում Մ 10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի 122.7 կմ-ին և 123.8 կմ-ին հարակից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող 1 /մեկ/ կիսաչոր ուռենին ամբողջովին, իսկ 4 /չորս/ ուռենիները և 1 /մեկ/ թթենին մասնակի հատելու համար (սանիտարական հատում):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված ծառերը հատելուց հետո, որպես վառելափայտ, տրամադրել համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Ալիկ Հայկի Հարությունյանի և Սիրակ Եփրեմի Գևորգյանի ընտանիքներին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 12 «09» դեկտեմբերի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 126

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ELAZ-BL880 ՄԱԿՆԻՇԻ ԷՔՍԿԱՎԱՏՈՐՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով «Ի զեն» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահի և Վերնաշենի միջնակարգ դպրոցի զինղեկի դիմումները՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն՝ Գլաձոր համայնքին պատկանող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով հետևյալ անհատույց աշխատանքներն իրականացնելու համար.

1) Եղեգնաձոր համայնքի Ալավերդյան փողոցին հարակից բլուրում խրամուղու փորում՝ «Ի զեն» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության կողմից ՈՄԱ-ի մարզումներ իրականացնելու նպատակով,

2) Վերնաշեն բնակավայրի դպրոցի տարածքում խրամուղու փորում՝ մարտարվեստի հրապարակ հիմնելու նպատակով:

2. «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցներով ձեռք բերված դիզելային վառելանյութից նվիրաբերել՝ սույն որոշման առաջին կետում նշված աշխատանքներն իրականացնելու համար:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 12 ***«09» դեկտեմբերի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 127

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ 73 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 46-Ա որոշման 4-րդ կետի պահանջը և «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից ներկայացված փոփոխված (լրացումներ) հաշվետվությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգը հաստատելու մասին» N 2119-Լ, որոշման համաձայն՝ 2021 թվականին Գլաձոր համայնքի կողմից իրականացված ծրագրերում «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տրամադրության տակ գտնվող տեխնիկաներով կատարված աշխատանքների վերաբերյալ փոփոխված (լրացումներ) հաշվետվությունն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 127 որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ «ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏԵԽՆԻԿԱՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով կատարված աշխատանքներ		
1	Վերնաշեն բնակավայրի ֆուտբոլի դաշտի հարակից տարածքների բարեկարգում	82 ժամ
2	Գլաձոր բնակավայրի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգում	38 ժամ
3	Գլաձոր բնակավայրի վոլեյբոլի դաշտի հարակից տարածքների բարեկարգում	9 ժամ
4	Գլաձոր համայնքի հայրենական մեծ պատերազմի հուշարձանների բարեկարգում	14 ժամ
5	2020 թվականի արցախյան 2-րդ պատերազմում զոհված զինծառայողների գերեզմանների բարեկարգում	50 ժամ
6	Գլաձոր համայնքի Վերնաշեն և Գետափ բնակավայրերում ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	35 ժամ
7	Գետափ բնակավայրում ֆուտբոլի դաշտի հարակից տարածքների բարեկարգում	10 ժամ
8	Էքսկավատորի տեղափոխություն շին հրապարակ	20 ժամ
9	5-րդ հասարակական աշխատանք 18-րդ փողոցում հենապատի հիմքերի քանդում	20 ժամ
Ընդամենը		278 ժամ
9	ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով կատարված հասարակական աշխատանքների համար ընդհանուր ծախսվել է դիզելային վառելանյութ:	1668 լ
GAZ մակնիշի, SAZ-3507 տիպի, 35 QP 716 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կատարված աշխատանքներ		
1	Վերնաշեն բնակավայրի դպրոցի տարածքից դեպի Գլաձոր բնակավայրի մանկապարտեզ խողովակի տեղափոխում 2 անգամ	6 կմ
2	Գլաձոր բնակավայրի մանկապարտեզի տարածքից հողի տեղափոխում	6 կմ
3	Գլաձոր բնակավայրից դեպի Գետափ բնակավայրի ֆուտբոլի դաշտ մետաղական	6 կմ

	ցանցի տեղափոխում	
4	Գլաձոր բնակավայրից դեպի Վերնաշեն բնակավայրի ֆուտբոլի դաշտ մետաղական ցանցի տեղափոխում	3կմ
5	Գլաձոր բնակավայրից դեպի Վերնաշեն բնակավայր 2020 թվականի արցախյան 2-րդ պատերազմում զոհված զինծառայողների գերեզմաններ ցեմենտի տեղափոխում	4 կմ
6	Հայրենական մեծ պատերազմի հուշարձանների բարեկարգման համար Գլաձոր բնակավայրից դեպի Գետափ բնակավայր շինանյութի տեղափոխում	8 կմ
7	Գլաձոր բնակավայրի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգման համար հողի տեղափոխում դեպի Վերնաշեն բնակավայր	3 կմ
Ընդամենը		36 կմ
8	GAZ մակնիշի, SAZ-3507 տիպի, 35 QP 716 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կատարված հասարակական աշխատանքների համար ընդհանուր ծախսվել է սեղմված բնական գազ	75 կգ
Ընդամենը		36 կմ
ՈՒԱԶ 390945-552 բեռնաուղևորատար մակնիշի մեքենայով կատարված աշխատանքներ		
1	2021 թվականին Գլաձոր համայնքի կողմից վարձատրվող հասարակական աշխատանքներով կատարված ծրագրերում «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տրամադրության տակ գտնվող ՈՒԱԶ 390945-552 բեռնաուղևորատար մակնիշի մեքենայով կատարված աշխատանքներ	338 կմ
2	ՈՒԱԶ 390945-552 բեռնաուղևորատար մակնիշի մեքենայով կատարված հասարակական աշխատանքների համար ընդհանուր ծախսվել է սեղմված բնական գազ	40կգ

«Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ս. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 12 ***«09» դեկտեմբերի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 128-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՌ ԳՆԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ և 9-րդ կետերը և քաղաքացի Գոռ Գնելի Գևորգյանի դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Գոռ Գնելի Գևորգյանին /սոցիալական քարտի համարը 2814830044/ տալ փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն՝ BMW 745 I մակնիշի, 37CQ366 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի համար՝ 31 250 /երեսունմեկ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ